միւսը ներքի մասում, մի և նոյն ժամանակ յանձնեց Շիրվանի կառավարչին Նէջէֆ – Կուլի սուլթանին՝ ջուր տանել քաղաքի մէջը, և աւազան շինել և ջրի ամբար. սորա կատարումը Նէջէֆ Կուլին յանձնեց Հաջի Եաղուբին՝ որ մի և նոյն տարին յաջողեց ջուր տանել քաղաքը, և 7 ջրի աւազան շինելը և ջրի ամբարը։ Նոյնպէս նոյն շահի հրամանաւ Փէրկաթ – բէկը՝ Բայաթների ցեղի գլխաւորը 400 իրեն ստորադրուած ընտանիքներ գաղթեցրեց Խորասանի նահանգի Նիշէբուր քաղաքից՝ Դարբանդ քաղաքը՝ նրան պահպանելու համար թշնամու յարձակումներից։ Այս գաղթականների մնացորդը այժմ եւս կան Դարբանդում։

ԺԶ. 12. «1138 թուին հաջի, տիրապետողը Ռուսիոյի և Դազանի Պետրոս Ա. թող Աստուած նորա հոգին լուսաւորէ, զօրեղ զօրքով անցաւ Թէրէք և Կայսու գետերը մտաւ Դարբանդ. նորա բնակիչները եկան նորա առաջ քաղաքի բանալիներով, և բաղդ ունեցան նորա քաղցը խօսակցութեան։ Երբ նա գնաց Դըրխլարսկի դուռը, շարժ եղաւ, ինչպէս նկատեց և կայսրն. խելօքներն ասեցին, թէ քաղաքը շարժեց նորա զօրութեան առաջ . . . ։ Հրամայեց ամեն մի աղքատ ընտանիքի տալ 2 չէտվէրտ ալիւր և 20 ական արշին քաթան, որը և իսկոյն կատարուեց։

Դարբանդի պատերի քանդուածները նորոգուեցան նորա հրամանաւ. վերջապէս կարգեց կառավարիչ քաղաքին Կուլի բէկին Կուրզի և թողեց իւր զօրքի մի մասն Նարինջ Կալայում. Պետրոս առաջինն վերադարձաւ Ռուսաստան։

ԺԷ. 12. 13. «1140 թուին հաջ. Իրանի գահը բարձրացաւ Թախման իբն Սէֆիլի Բ. թագաւորական գործերը օրէց օր յետ էին գնում . . . նորա մի սարդարը՝ Նադիր անունով՝ խնջոյքի ժամանակ կապեց նրան և նորա տոհմի բոլոր անդամների հետ բանտարկեց Սէվզիվար քաղաքում, և ինքն առանց արգելանաց նստեց Իրանի գահի վրայ . . . ։ Նորա կարգած Դարբանդի կառավարիչ Մամատ Ալի խան Կարախլու՝ մի քանի անպիտանների յանդուգն վարմանց համար՝ աչքերը հանել տուեց, որք էին 700 մարդիկ։

« . . . Միկրի հասարակութիւնը՝ որք բնակւում են այժմ Դարբանդում 50 ընտանիք (Սուննի՝ Շաֆի աղանդը) այն տեղ